ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4 , հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«09» 10 2024թ.
No 01/7785

**«Ա.ԳԻՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՏԻԿԻՆ ՄԵԼԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ**
**(հասցե՝ ք. Երևան, Դեղատան փ., շ. 10, բն. 8)**

Հարգելի՛ տիկին Մանուկյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի հոկտեմբերի 1-ի ««Ա.ԳԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02898/24 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 649-Ա որոշման պատճենը:

Տեղեկացնում ենք, որ Հանձնաժողովին փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

*Առդիր՝ «2» թերթ:*

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

*Կատարող՝ Զարուհի Մելքումյան*
*Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն*
*Հեռ. (+374 60) 830-840 (240)*

**www.competition.am կայքում հրապարակման օրը՝ 24 հոկտեմբերի 2024 թվական:**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 հոկտեմբերի 2024 թվականի թիվ 649-Ա

### «Ա.ԳԻՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ ՀԳ-02898/24 ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2024 թվականի հոկտեմբերի 1-ի նիստում, քննարկելով «Ա.ԳԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) վերաբերյալ թիվ ՀԳ-02898/24 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին հարցը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովը 2024 թվականի հուլիսի 2-ի ««Ա.ԳԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 384-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ **թիվ 384-Ա որոշում**) հարուցել է թիվ ՀԳ-02898/24 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Վարույթը հարուցված է «կրթական կենտրոն» և «մանկապարտեզ» բառերի օգտագործմամբ գործունեություն իրականացնելու առնչությամբ Ընկերության վարքագծում ինչպես առանձին, այնպես էլ համակցության մեջ անբարեխիղճ մրցակցության, այդ թվում՝ հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Ընկերությունը թիվ 384-Ա որոշումը ստացել է 2024 թվականի հուլիսի 8-ին, սակայն Վարույթի առնչությամբ որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի 2024 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ ՄՊՀ-011416 գրությամբ Ընկերությանն առաջարկվել է ներկայացնել գրավոր դիրքորոշում՝ Հանձնաժողովի անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության (այսուհետ նաև՝ **Պատասխանատու ստորաբաժանում**) կողմից կազմված ««Ա.ԳԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02898/24 վարույթում առկա

փաստական հանգամանքների մասին» տեղեկանքի (այսուհետ նաև՝ **Տեղեկանք**) առնչությամբ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պատասխանատու ստորաբաժանումը 2024 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ ՄՊՀ-011488 զեկուցագրով, ի թիվս այլնի, առաջարկել է եռամսյա ժամկետով երկարաձգել Վարույթի ժամկետը՝ հայտնելով, որ Վարույթի ժամկետը լրանում է 2024 թվականի հոկտեմբերի 2-ին, իսկ Տեղեկանքի առնչությամբ Ընկերության լսված լինելու իրավունքն իրացնելու, անհրաժեշտության դեպքում հավելյալ տեղեկատվություն ձեռք բերելու, ինչպես նաև Վարույթի շրջանակում գործի բազմակողմանի և լրիվ քննությանն ուղղված այլ գործողություններ կատարելու համար՝ Վարույթի իրականացման՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով (այսուհետ նաև՝ **Օրենք**) սահմանված եռամսյա ժամկետը բավարար չէ:

Նման պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ Վարույթի ժամկետն անհրաժեշտ է եռամսյա ժամկետով երկարաձգել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2024 թվականի հոկտեմբերի 2-ից եռամսյա ժամկետով երկարաձգել «Ա.ԳԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաբերյալ թիվ ՀԳ-02898/24 վարույթի ժամկետը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՆԱԽԱԳԱՀԻՆ**
**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՓՈԽԱՐԻՆՈՂ** **Տ. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

2024 թ. հոկտեմբերի 1
Երևան